ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ. Մարկոսյանի մոտ կայացած խորհրդակցության

06.08.2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, Տեղական ինքնակառավարման մարմինների և Զբաղվածության տարածքային կենտրոնների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ

1. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզի մի շարք համայնքներում իրականացվող ծրագրերի մշտադիտարկումների արդյունքների մասին.

   ա/ Սպիտակի տարածաշրջանում /Ծաղկաբեր, Շենավան համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Սպիտակի ԶՏԿ տնօրեն Գագիկ Ստեփանյան, խորհրդատու Գայանե Բոջուկյան/

   բ/ Թումանյանի տարածաշրջանում /Ախթալա, Չկալով համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Ալավերդու ԶՏԿ տնօրեն Նունե Անտաշյան, խորհրդատու Իրինա Գրիգորյան/

   գ/ Ստեփանավանի տարածաշրջանում /Լոռի Բերդ /Հովնանաձոր, Բովաձոր/, Գյուլագարակ /Վարդաբլուր/ համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Ստեփանավանի ԶՏԿ տնօրեն Մկրտիչ Գրիգորյան, խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան/

2. ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքում 04.05.2020թ.-ից սկսված և 30.07.2020թ. ավարտված ծրագրերի մասին:

   /Զեկ.՝ Ծաղկաբեր համայնքի ղեկավար Հովիկ Հովհաննիսյան, Սպիտակի ԶՏԿ տնօրեն Գագիկ Ստեփանյան/

3. ՀՀ Լոռու մարզի Ախթալա /Փոքր Այրում, Ճոճկան/ և Չկալով համայնքներում 01.05.2020թ.-ից սկսված և /առաջինը՝ 28.07.2020թ., իսկ երկրորդը՝ 30.07.2020թ./ ավարտված ծրագրերի մասին:

   /Զեկ.՝ Ախթալա համայնքի ղեկավար Արկադի Թամազյան, Չկալով համայնքի ղեկավար Ռոման Շաքարյան, Ծրագրի խորհրդատու Իրինա Գրիգորյան/

4. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ և Գյուլագարակ /Վարդաբլուր/ համայնքներում 01.05.2020թ.-ից սկսված և 31.07.2020թ. ավարտված ծրագրերի մասին:

   /Զեկ.՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ Էդվարդ Մելիքսեթյան, Գյուլագարակ համայնքի ղեկավարի ժ/պ Ռաֆիկ Վարդանյան, Վարդաբլուրի վարչական ղեկավար Հակոբ Վարդանյան, Ծրագրի խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան/

5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված 2020թ. համար ՀՀ Լոռու մարզին ևս 6 լրացուցիչ ծրագրեր հատկացնելու առաջարկի մասին /ՀՀ Լոռու մարզպետի 13.07.2020թ. թիվ 01/104.3/07162-2020 գրությունը/;

   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

6. Այլ հարցեր:

Ո ր ո շ ե ց՝

1. Ա ր ձ ա ն ա գ ր ե լ՝

ա/ ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբերի համայնքապետարանի կողմից 01.05.2020թ. – 30.07.2020թ. իրականացված «Ծաղկաբեր համայնքի մանկապարտեզի շենքի մասնակի նորոգում և տաղավարի կառուցում» ծրագրի ավարտը

բ/ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի կողմից 02.05.2020թ. – 31.07.2020թ. իրականացված «Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատի ավարտում, Բովաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում, նույն բնակավայրի բուժկետի շենքի հատակի վերանորոգում» ծրագրի ավարտը:

գ/ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանի կողմից 01.05.2020թ. – 31.07.2020թ. իրականացված «Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

դ/ ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանի կողմից 01.05.2020թ. – 28.07.2020թ. իրականացված «Ախթալա համայնքի Ճոճկան և Փոքր Այրում գյուղերի գերեզմանատների ցանկապատում, տարածքների բարեկարգում» ծրագրի ավարտը:

ե/ ՀՀ Լոռու մարզի Չկալովի համայնքապետարանի կողմից 01.05.2020թ. – 30.07.2020թ. իրականացված «Չկալով համայնքի գերեզմանատան ցանկապատի վերակառուցման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ՝ ավարտված ծրագրերի վերաբերյալ:

բ/ Համապատասխան տեղեկատվությունը տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական գործակալություն»:

գ/ Նիստի նյութերը /օրակարգ, Հանձնաժողովի որոշում, նիստի արձանագրություն և այլն/ տեղադրել մարզպետարանի կայք-էջում:

2. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Աննա Գասպարյանին՝

Ապահովել իրականացվող ծրագրերի մասին հանրային իրազեկումը՝ աշխատանք-ներին ներգրավելով մասնակից կողմերին /գործընթացի կազմակերպիչներ, շահառուներ/:

/Տարվա ընթացքում/

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար
Վ.Ջաղինյանը /2-33-99/